ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/09>> ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Կապան 05 մայիս 2026թ.

ժամը 10:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝ Արմեն Սարգսյան/ԳԱՊ/,

անդամներ՝ Լուսինե Նավասարդյան/ԲԱ/, Արմինե Աբրահամյան/ԲԱ/, Հասմիկ Ղոնյան/ԳԱ/, Նարինե Գասպարյան/ԳԱ/

քարտուղար՝ Լուսինե Ավետիսյան

<<ՀՀ-ՍՄԿՀ-ԳՀԱՇՁԲ-26/09>> ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին/շարունակություն/

(Ա. Սարգսյան)

1.Ընդունվել է ի գիտություն, որ 2026թ. ապրիլ 29-ին Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ստացվել է պատասխան՝ գնման գործընթացը սահմանված կարգով շարունակելու և հետևյալ քայլերը պահպանելու մասին.

-նախքան պայմանագրի կնքումը հանդես գալ(Դատվիրատուի ղեկավարը) տվյալ իրավիճակում շահերի առկայության մասին հայտարարությամբ,

-հրապարակել և պահպանել հայտարարությունը համայնքապետարանի պաշտոնական կայքէջում,

-հրապարակված հայտարարության հղումը պատասխան գրությամբ ներկայացնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

2.Հիմք ընդունելով <<Հանրային ծառայության մասին>> ՀՀ օրենքով սահմանված կարգով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովից ստացված պատասխանը՝ հանձնաժողովը որոշեց.

2.1.հանձնաժողովի անդամների կողմից իրականացված գնահատման արդյունքների և գնահատման թերթիկների հիմքով բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել ընթացակարգի ընտրված մասնակից,

2.2.գնման ընթացակարգը շարունակել օրենքով սահմանված կարգով, ապահովել համապատասխան ծանուցումների և հայտարարությունների հրապարակումը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ ---------- Ա. Սարգսյան

անդամներ ---------- Հ. Ղոնյան

---------- Ն. Գասպարյան

---------- Ա. Աբրահամյան

---------- Լ. Նավասարդյան

քարտուղար ---------- Լ. Ավետիսյան